ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՍԵՆ ԼԵՎՈՆԻ ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1991-2010 ԹԹ.

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ.,պրոֆ. Ա. Գ. Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Ռ. Կ. Կարապետյան
պ.գ.թ. Ա. Գ. Իսրայելյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. նոյեմբերի 22-ին, ժամը 12:00- ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. հոկտեմբերի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝

պ.գ.թ. Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է մերձավորարևելյան տարածաշրջանում կարևոր դերակատարություն ունեցող երկրների՝ Թուրքիայի և Սիրիայի փոխհարաբերությունների զարգացման դինամիկայի վերլուծման և տարածաշրջանային զարգացումների վրա նրանց ազդեցության աստիճանն ու փոխկապակցվածության գնահատման անհրաժեշտությամբ: Այդ համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի երկկողմ հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրների լուծման համար բանակցային տարաբնույթ ձևաչափերի օգտագործման, ազգային շահերի պաշտպանության տեսակետից տարբեր ուժային կենտրոնների, հարևան պետությունների հետ բանակցային երկկողմ և եռակողմ մեխանիզմներ ստեղծելու, դաշինքներ կազմելու, երրորդ կողմի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում միջնորդություն ստանձնելու գործունեության արդյունավետության ուսումնասիրությունը: Երկու հարևան պետությունների փոխհարաբերությունները, ներառելով պատմական, տարածքային, էներգետիկ և այլ բաղադրիչներ, տասնամյակներ շարունակ գտնվել են մերձավորարևելյան քաղաքական գործընթացների կիզակետում՝ ազդելով ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև միջազգային զարգացումների ընթացքի ու բնույթի վրա:

ԽՍՀՄ փլուզումից և Սառը պատերազմի ավարտից հետո թուրք-սիրիական հարաբերությունները, կրելով պատմական և ընթացիկ տարածաշրջանային գործոնների ուղղակի ազդեցությունը, ենթակրվել են փուլային փոխակերպումների, և համապատասխանաբար երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծումները բանակցային սեղանից գրեթե տեղափոխվել են պատերազմական հարթակ (խոսքը մասնավորապես 1998թ. նախապատերազմական իրադրության մասին է): Մյուս կողմից երկկողմ փոխհարաբերությունները զարգացում են ապրել մինչև ամենաբարձր՝ Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի մակարդակ (2010թ.):

Ինչպես Թուրքիան, այնպես էլ Սիրիան, լինելով տարածաշրջանում առանցքային դերակատարներ, մշտապես փորձել են իրենց քաղաքական առաջնայնություններն ու շահերը հնարավորինս համադրելի դարձնել տարածաշրջանում առկա երրորդ, այդ թվում՝ արտատարածաշրջանային կողմերի շահերի շրջանակին. Այս քաղաքականության

հիմքում եղել է այն համոզումը, որ այդ կերպ հնարավոր է առավել արդյունավետ ու համալիր կարգավորել երկկողմ օրակարգի խնդրահարույց հիմնահարցերը: Այս համատեքստում ներկայացվող հետազոտության մեջ դիտարկվում է ոչ միայն թուրք-սիրիական, այլև երրորդ երկրների տարածաշրջանային օրակարգը, առկա խնդիրների ու հակամարտությունների նկատմամբ նրանց մոտեցումներն, առանձնահատկություններն ու փոխակերպման միտումները:

Ընտրված թեմայի կարևորությունը, կարծում ենք, նաև նրանում է, որ թե՛ Թուրքիան և թե՛ Սիրիան, թեև որակապես տարբեր, բայց շոշափելի դերակատարում են ունեցել ու այսօր էլ ունեն հայ ժողովրդի պատմական ճակատագրում:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Ներկայացվող հետազոտության օբյեկտը 1991-2010թթ.-ի միջև ընկած ժամանակահատվածում Թուրքիայի և Սիրիայի հարաբերություններն են: Ներկայացվող հետազոտության առարկան ամբողջացնում է 1991-2010թ. թուրք-սիրիական փոխհարաբերությունների պատմաքաղաքական համատեքստի վերհանման, քաղաքական հարաբերությունների գործընթացային և պատճառական կապերի հստակեցման, մրցակցության ու հակադրության բազմաբաղադրիչ իրողությունների ուսումնասիրությունը:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության թեմայի նպատակն է հետազոտել Սիրիայի ու Թուրքիայի փոխհարաբերությունների առանցքային փուլերից մեկը և վերհանել դրանց կապը տարածաշրջանային գործընթացների հետ: Այդ նպատակին հասնելու համար առանձնացրել ենք հետևյալ խնդիրները.

- ներկայացնել 1990-91թթ. Ծոցի ճգնաժամի արդյունքում մերձավորարևելյան տարածաշրջանային փոփոխությունների ազդեցությունը Թուրքիայում և Սիրիայում ստեղծված նոր քաղաքական իրավիճակի վրա և ուժերի նոր հարաբերակցությունում նրանց մոտեցումները, արտաքին քաղաքականության ռազմավարության փոփոխությունները,
- ներկայացնել սիրիա - թուրքական հարաբերությունների զարգացման դինամիկան և դրա հիմնական շրջափուլերը,
- դիտարկել ու քննարկել ուսումնասիրվող ժամանակաշրջանում երկկողմ հարաբերություններում առկա խնդիրների վերաբերյալ տարածաշրջանային երկրների դիրքորոշումները, վերհանել նրանց շահերի բախման հնարավոր առանցքները,

- դիտարկվող ժամանակահատվածում ներկայացնել երկկողմ հարաբերություններում առկա նոր քաղաքական միտումները և դրանց հիմնապատճառները,
- ներկայացնել և լուսաբանել երկկողմ և բազմակողմ բանակցային ձևաչափերը, երրորդ երկրների հետ հարաբերություններով պայմանավորված զարգացումները, միջնորդական առաքելության առաջարկությունները,
- ներկայացնել բանակցային գործընթացում հիմնահարցերի վերաբերյալ կողմերի փաստարկներն ու հակափաստարկները, միջազգային պայմանագրերի վերաբերյալ դիրքորոշումներն ու մեկնաբանությունները,
- ներկայացնել հարաբերությունների զարգացումը պատերազմի շեմին հայտնվելուց մինչև Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի ստեղծումը:

Ատենախոսության ուսումնասիրության մակարդակն ու գիտական նորույթը: Ներկայացվող հետազոտությունը 1991-2010թթ.-ին սիրիա-թուրքական հարաբերությունների համալիր ուսումնասիրություն է՝ պայմանավորված երկկողմ փոխհարաբերություններում տարածաշրջանային զարգացումների արդյունքում տեղի ունեցած փոփոխություններով, ինչպես նաև իր հերթին տարածաշրջանային զարգացումների վրա այդ հարաբերությունների ազդեցության գնահատմամբ: Ներկայացվող հետազոտության մեջ գիտական նորույթ կարող է հանդիսանալ այն, որ երկու հարևան պետությունների հարաբերությունները դիտարկվում են ոչ թե հիմնահարցերի զարգացման պատմական ծագումնաբանության, այլ որդեգրած արտաքին քաղաքական գծի, բանակցային գործընթացների վերլուծության, կողմերի փաստարկների և տարածաշրջանային մեխանիզմների օգտագործման համատեքստում:

Հետազոտության մեջ երկկողմ հարաբերությունները քննության են առնվում ներքին ու արտաքին փոխկապվածության համատեքստում՝ մի կողմից դիտարկվելով որպես տարածաշրջանային շահերի ազդեցությունն իրենց վրա կրող, մյուս կողմից՝ մերձավորարևելյան իրողություններում առկա քաղաքական մթնոլորտի վրա շոշափելի դերակատարում ունեցող կարևոր գործոն: Հետազոտության մեջ գիտական նորույթ կարող է համարվել սիրիա-թուրքական հարաբերությունների դիտարկումը ինչպես տարածաշրջանային (օրինակ, պաղեստինյան հիմնահարցի) խնդիրների վերաբերյալ կողմերի մոտեցումների ու շահերի խաչման, այնպես էլ երրորդ երկրների՝ Իսրայելի և Լիբանանի հետ փոխհարաբերությունների

համատեքստում դիտարկելը՝ դրանով պայմանավորված Սիրիայի ու Թուրքիայի տարածաշրջանային վարքի դրսևորումներում դինամիզմի և օրինաչափությունների արձանագրումը:

Հայաստանում դեռևս թուրք-սիրիական հարաբերությունները չեն դիտարկվել Ադանայի պայմանագրին հաջորդած ժամանակահատվածից մինչև Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի ստեղծումը, ինչպես նաև «Մեծ Արևելք» նախագծի համատեքստում Թուրքիայի և Սիրիայի՝ երրորդ երկրների հետ հարաբերությունների փոփոխությունը և միջնորդական առաքելությունների վերլուծությունը, ուստի սույն ատենախոսությունը կոչված է լրացնելու այդ բացը:

Ատենախոսության գիտական նորույթը նաև նրանում է, որ հայկական գիտական գրականության մեջ առաջին անգամ դիտարկվում և վերլուծվում են 1998թ. հոկտեմբերի 20-ի Ադանայի պայմանագրի վրա հիմնվող և այդ պայմանագրի համագործակցության ոլորտներն ընդլայնող 2009թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի և Սիրիայի ներքին գործերի նախարարությունների միջև ստորագրված «Անվտանգության և համագործակցության» և 2010թ. դեկտեմբերի 21-ին Թուրքիայի և Սիրիայի կառավարությունների միջև ստորագրված «Ահաբեկչության և ահաբեկչական կազմակերպությունների դեմ համատեղ համագործակցության» համաձայնագրերը [1]: Սրա արդիականությունը նրանում է, որ ներկայումս Սիրիայի հյուսիսում անվտանգության գոտի ստեղծելու հարցում որպես իրավական հիմք Թուրքիայի իշխանությունները հարկ եղած դեպքում հղում են կատարում նշված համաձայնագրերին:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ներկայացվող ատենախոսության ժամանակագրական սահմանները ներառում են 1991-2010թթ. թուրք-սիրիական հարաբերություններում առկա իրողությունները, թեև հետազոտության խնդիրները պատշաճ ներկայացնելու ու վերլուծելու նպատակով սույն աշխատանքի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև երկկողմ հարաբերություններում առկա խնդիրների ծագումնաբանությանը և զարգացման պատմական դինամիկային:

Ատենախոսության տեսական-մեթոդական հիմքերը: Ատենախոսության շարադրման գործում օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական քննության և միջգիտակարգային

---

[1] Տե՛ս T.C. Başbakanlık, Kanunlar ve Kararlar Genel Müdürlüğü, B.02.0.KKG.0.10/101-277/463, 9/2/2011

հետազոտության ընդհանուր մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել ատենախոսության մեջ արծարծված խնդիրները մեկ ամբողջության մեջ: Հետազոտության մեջ հիմնական մեթոդ է հանդիսացել երկկողմ ու տարածաշրջանային համատեքստում առկա հիմնախնդիրների դիտարկման միջոցով երկու երկրների քաղաքական դիրքորոշումների վերհանման ու վերլուծության մոտեցումը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք հանդիսանալ արծարծվող հիմնահարցին վերաբերող հետագա ուսումնասիրությունների համար, օգտագործվել դասախոսություններում և միջազգային հարաբերությունների, արևելագիտության, կոնֆլիկտաբանության և այլ ոլորտներին առնչվող դասախոսությունների ժամանակ:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդում:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Ատենախոսության աղբյուրագիտական բազան կազմում են պաշտոնական փաստաթղթերը, Սիրիայի և Թուրքիայի ղեկավարների, բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների, քաղաքական գործիչների ելույթներն ու հարցազրույցները, որոնցում արտացոլվել են երկկողմ հարաբերությունները, արտաքին քաղաքականության մոտեցումներն ու դիրքորոշումները: Ատենախոսությունում օգտագործվել է գիտական գրականություն և սկզբնաղբյուրներ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներով:

Ներկայացվող ատենախոսության պատրաստման գործընթացում օգտագործվել են միջազգային տարատեսակ փաստաթղթեր [2], միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների և վերլուծական կենտրոնների ամփոփագրեր, զեկույցներ ու հաշվետվություններ:

Ներկայացվող ուսումնասիրության մեջ պատմական փաստերի ու վավերական նյութերի հավաքագրման համար արժեքավոր աղբյուր են հանդիսացել տարալեզու՝ այդ թվում արաբալեզու, անգլալեզու, թրքալեզու և ռուսալեզու մի շարք պարբերականներ, թերթեր, լրատվական գործակալությունների կայքեր, որոնցից հիշատակման

---

[2] Տես Lauterpacht E., Greenwood C. J., Weller M., The Kuwait Crisis: Basic Documents. Cambridge University Press, 01.01.1991.

արժանի են՝ «Հյուրրիեթ», «Միլիեթ», «Ռադիկալ», «Սաբահ», «Թըրքիշ թայմս», «ալ-Վաթան ալ-Արաբի», «ալ-Սաֆիր», «ալ-Աքբար ալ-Մասրի», «աս-Սաֆիր», «Ջումհուրիեթ», «Հաարեց», «Միդլ իստ նյու էջնսի», «Վաշինգտոն փոստ», «Ջերուսալիմ ռիփորթ», «ՌԻԱ Նովոստի», «ԻՏԱՐ-ՏԱՍՍ» և այլն:

Հայ պատմագրության մեջ թուրք-սիրիական հարաբերությունները լուսաբանվում են մի շարք հեղինակների գիտական հետազոտություն-ներում և ուսումնասիրություններում: Այս առումով հետազոտության պատրաստման մեջ առանձնահատուկ կարևոր դերակատարում է ունեցել պրոֆ. Ն.Հ. Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն» քառահատոր ֆունդամենտալ աշխատությունը, որի երկրորդ, երրորդ և չորրորդ հատորներում ներկայացված մի շարք մոտեցումներ, պատմական իրողությունների մեկնաբանություններ ու վերլուծություններ արտացոլվել են ատենախոսության առանձին հատվածներում[3]: Թեկնածուական ատենախոսության պատրաստման ժամանակ կարևոր դերակատարում են ունեցել մի շարք գիտնականների ու հետազատողների՝ Ռ. Կարապետյանի [4], Ա. Բայրամյանի [5], Կ. Հարությունյանի [6], Ա. Հարությունյանի[7], Մ. Աղաջանյանի, Ա. Իսրայելյանի [8] և այլոց ուսումնասիրություններն ու մենագրությունները: Ներկայացվող հետազատության ընտրված

---

[3] Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 1-4., Երևան, 2003-2007:

[4] Տե՛ս Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003թ.:

[5] Տե՛ս Բայրամյան Ա.Ա., Ալեքսանդրետի սանջակի իրավական ստատուսը և քաղաքական խմբավորումները: 1920-1930-ական թվականներե, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, հ. 12, Երևան, 1964:

[6] Տե՛ս Հարությունյան Կ., Ջուրը կարևորագույն ռեսուրս Մերձավոր Արևելքում, Մերձավոր Արևելք (I): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվ. ժող. ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ինս-տ, Երևան, 2002թ:

[7] Տե՛ս Հարությունյան Ա., Քրդական գործոնի աշխարհաքաղաքական դերը // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, հոդվածների ժողովածու, հ. 19, Երևան, 2000թ.:

[8] Տե՛ս Իսրայելյան Ա., Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկություններն Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տասնամյակում (2002-2012թթ.), Երևան, VMV Print, 2016:

թեմայի տարբեր դրվագների ու պատմական հանգրվանների մշակման տեսանկյունից կարևոր են եղել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոդվածների ժողովածուները:

Հետազոտության թեմայի՝ թուրք-սիրիական հարաբերությունների առանձին դրվագներ լուսաբանվում են նաև արտերկրյա մի շարք հետազոտողների հիմնարար ուսումնասիրություններում և մենագրություններում: Մասնավորապես՝ թուրք-սիրիական հարաբերությունների ամենատարբեր՝ այդ թվում երկկողմ ու բազմակողմ համատեքստին համապարփակ անդրադարձ է կատարել Դ. Փայփսը[9], ում հետազոտությունները հիմնվում են երկու երկրների փոխհարաբերություններում առկա պատմական խնդիրների վերլուծությունը տարածաշրջանային ու միջազգային ուժային կենտրոնների շահերի համատեքստում հետազոտելու սկզբունքի վրա:

Թուրքիայի արտաքին քաղաքականության ուսումնասիրության տեսակետից կարևոր աղբյուր է պրոֆեսոր Բասքըն Օրանի խմբագրությամբ լույս տեսած «Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ազատագրական պայքարից մինչ այսօր: Դեպքեր, փաստաթղթեր, մեկնաբանություններ» եռահատոր մենագրական ժողովածուն, ուր առանձին բաժիններ են նվիրված թուրք-սիրիական հարաբերություններին[10]:

Ներկայացվող ուսումնասիրության մեջ թուրք-սիրիական հարաբերություններում առկա տարածքային խնդիրների՝ մասնավորապես Ալեքսանդրետի սանջակի հիմնահարցը հանգամանորեն դիտարկվել ու վերլուծվել է Ա.Ա. Բայրամյանի [11], Ա. Սանջյանի [12], Ա.

---

[9] Տե՛ս Pipes D.. Syria beyond the peace process. Policy paper. Washington, 1996.

[10] Տե՛ս Türk Dış Politikası Kurtuluş Savaşından Bugüne. Olgular, Belgeler, Yorumlar, editor: Baskın Oran, cilt I, II, III, İstanbul 2001-2013.

[11] Տե՛ս Պայրամյան Ա. Ա., Ալեքսանտրետի սանճակի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1918-1939. Լիբանան, 1999թ.:

[12] Տե՛ս Sanjian A. The Sanjak of Alexandretta: its impact on the Turkish-Syrian-French relations 1939-1956// Middle East Journal, JV» 4, Volume 10, Autumn 1956.

Աբրահամյանի [13] հետազոտությունների հիմքի ներքո: Տարածքային խնդրին ու դրանով պայմանավորված երկու երկրների փոխհարաբերությունները հանգամանալից դիտարկվում և ուսումնասիրվում են նաև Մ. Աղաջանյանի հոդվածում[14]:

Ատենախոսության մեջ թուրք-սիրիական հարաբերությունների կարևոր հաջորդ հիմնահարցին՝ ջրի խնդրի ուսումնասիրության ժամանակ մեր կողմից դիտարկվել են գիտական բազմաթիվ աշխատություններ, որոնցից կառանձնացնենք Կ. Հարությունյանի[15], Ն. Մոսակիի [16], Ա. Չարքօղլուի [17], Մ. Ջոեջաթի (Murhaf Jouejati) [18], Յ. Ինանի [19], Պ. Սիլի [20] գործերը:

Ատենախոսության շարադրման ընթացքում որոշ բարդությունների հանդիպեցինք կապված քրդական հարցի, քրդական քաղաքական շարժման դինամիկայի գիտական վերլուծության հետ, քանի որ տարածաշրջանային և երկկողմ հարաբերությունների այս բարդ թնջուկը հաճախ ներկայացվում է ոչ օբյեկտիվ՝ շահագրգիռ կողմերի շահերին ծառայեցնելով: Քրդական հարցի հետազոտության

---

[13] Տես Aprahamian Arménag, Le Sandjak D'alexandrette 1934-1939, http://www.western-armenia.eu/stat.gov.wa/fr /2012/Le_Sandjak_d_Alexandrette_Rapport_n3.pdf, 2008.

[14] Տե՛ս Агаджанян М., Александретский Санджак: потерянная родина армян, Нораванк Имнадрам, 17.05.2007, http: //www.noravank.am/rus/ issues/detail.php?ELEMENT_ID=3056

[15] Տե՛ս Հարությունյան Կ., Ջուրը կարևորագույն ռեսուրս Մերձավոր Արևելքում, Մերձավոր Արևելք (I): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվ. ժող. ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ինս-տ, Երևան, 2002թ:

[16] Տե՛ս Мосаки Н.З., Проблема проекта Ылысу в турецко-иракско-сирийских отношениях, Институт Ближнего Востока, 10.07.2007, www.iimes.ru

[17] Տե՛ս Ali Carkoglu, Mine Eder, "Domestic concerns and the water conflict over the Euphrates-Tigris river basin", Middle Eastern Studies, Vol. 37, No. 1, 2001.

[18] Տե՛ս Murhaf Jouejati. Water Politics as High Politics: the Case of Turkey And Syria // in Henry J, BARKEY's ed. «Reluctant Neighbour: Turkey's Role in The Middle Eas» (US Institute of Peace Press,), Washington D.C, 1996.

[19]Տե՛ս Y. Inan, "The law of international watercourses and the Middle East", http://sam.gov.tr/wp-content/ uploads/2012 /01/Yuksel-Inan.pdf

[20] Տե՛ս Patrick Seale. Turkey and Syria: the war over water // Middle East International, N4, 04.07.1999.

ժամանակ օգտվել ենք մի շարք գիտնական հետազոտողների ուսումնասիրություններից, մենագրություններից, հոդվածներից:

Հետազոտության մեջ Սիրիայի արտաքին քաղաքականության դրսևորումների վերաբերյալ կարևոր մոտեցումների հեղինակ է Է. Զիսերը[21] և Վ. Ահմեդովը[22], ովքեր իրենց հոտազոտությունների նյութ են դարձնում Բ. Ասադի արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև այն տրանսֆորմացիոն գործընթացները, որոնք տեղ գտան սիրիական արտաքին ու ներքին քաղաքականության մեջ 20-րդ դարի 90-ականների ավարտին: Նշենք, որ հետազոտության մեջ օգտագործվել են նաև մի շարք թուրք հեղինակների [23] աշխատություններ, որոնք սակայն շատ դեպքերում աչքի են ընկնում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մոտեցումների ներկայացման որոշակի կողմնակալությամբ: Հետազոտության պատրաստման ժամանակ արաբ հեղինակները ևս ուշադրության կենտրոնում են եղել [24]:

Նշենք, որ ներկայացվող հետազոտության մեջ Թուրքիայի և Սիրիայի փոխհարաբերությունները դիտարկվում են ոչ միայն երկկողմ ձևաչափում, այլև իրենց մեջ ներառում են այդ երկրների հետ տարածաշրջանային և միջազգային տերությունների՝ ԱՄՆ, Իսրայելի, Իրանի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի ու տարածաշրջանային կազմակերպությունների (Արաբական երկրների լիգայի և Պարսից

---

[21] Տե՛ս Eyal Ziser., Asad's Legacy: Syria in Transition, C. Hurst & Co. Publishers, https://books.google.am/books?id=_KR89t0433sC&pg

[22] Տե՛ս Ахмедов В.М. Сирия при Башаре Асаде. Региональный опыт модернизации в условиях внешней нестабильности., М., 2005.

[23] Տե՛ս Fuat Dündar, Modern Türkiye'nin Şifresi. İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918) İstanbul; Bağımsızlıktan Arap Baharı'na Suriye İç ve Dış Politika, Editörler: Mehmet Akif Okur – Nuri Salık, İstanbul, 2016; Oya Akgonenc Mughisuddin, Turkey and the Middle East: Systemic and Subsystemic Determinants of Policy 1960-1975, Foreign Policy Institute, Ankara, 1993.

[24] محمد عبد الناصر سرور ,التعاون (الإسرائيلي، التركي) في السياسة المائية خلال عقد التسعينات، سلسلة الدراسات الإنسانية، مجلة الجامعة الإسلامية
غزة ٢٠٠٨ ص، ١٨٩.

دراسات , السياسة الخارجية لتركيا تجاه سوريا ٢٠٠٢- ٢٠٠٨,محمد عبد العاطي التلولي ص، ٣٠-٣٢ الشرق الاوسط من كلية الاداب و العلوم الانسانة بجامعة الازهر-غزة ٢٠١١م
جلال عبد الله معوض ،صناعة القرار في تركيا والعلاقات العربية التركية، ، ط١ مركز ص،١٩٧- ١٩٨ دراسات الوحدة العربية ، بيروت ١٩٩٨

ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի) մրցակից կամ դաշնակից շահերը, որոնց հանգամանալից անդրադարձ է արվել Բ. Մուհրիջի, Ա. Գերշի, Օ. Բենգիոյի, Ջ. Ֆուլլերի, Ռ. Օլսոնի, Ֆ. Կոնովիչի և այլոց աշխատություններում:

Թուրք-սիրիական հարաբերություններին նվիրված հետազոտությունների մեջ կարծում ենք շոշափելի ներդրում է ունեցել Ա.Հարությունյանը [25], ով գիտական լուրջ աշխատանք է կատարել երկու երկրների փոխհարաբերությունների, այնտեղ առկա խնդիրների, դրանց սկզբնապատճառների, զարգացման դինամիկայի ու դրա ամենատարբեր փուլերում տարաբնույթ դրսևորումների, տարածաշրջանային համատեքստում երկկողմ փոխհարաբերությունների փոխակերպման, գործընթացների վերհանման ու վերլուծության առումով:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածությունում ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության ժամանակագրական սահմանները, տեսական-մեթոդաբանական հիմքերը, կիրառական նշանակությունը, ուսումնասիրության խնդիրների վերաբերյալ աղբյուրների և գրականության տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխն ունի «**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1991-1998 ԹԹ.)**» վերնագիրը և կազմված է երեք ենթագլխից: Առաջին գլխի առաջին ենթագլխում, որն ունի «**Երկբևեռ աշխարհի փլուզումն ու 1990-91 թթ. Ծոցի ճգնաժամի անդրադարձը տարածաշրջանային գործընթացների վրա. սիրիական(արաբական) և թուրքական դիտանկյուն**» խորագիրը, դիտարկվում և ներկայացվում են 1990-91թթ.

---

[25] Տե՛ս Арутюнян А. Э., К вопросу о взаимоотношениях между Турцией и Сирией в конце 20-го-начале 21-го вв. // сб. статей «Современая Турция: проблемы и решения», М., 2006., Арутюнян А. Э., Турецко-сирийские отношения на рубеже веков (1980-е годы - начало XXI века), Диссертация на соискание ученой стенени канднда́та нсторических наук. Москва- 2007.

Իրաքյան ճգնաժամի ի հայտ գալու պատմաքաղաքական հիմքերը և ռազմաքաղաքական դինամիկան, արաբական աշխարհի և միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի արձագանքը Քուվեյթի բռնակցմանը, Պարսից ծոցի արաբական երկրների խորհրդի ու Արաբական երկրների լիգայի որդեգրած մոտեցումները: Վերոնշյալի համատեքստում հանգամանալից դիտարկվում և վերլուծվում են Սիրիայի ու Թուրքիայի քաղաքական մոտեցումներն ու շահերը, դրանց փոխակերպման ուղեգիծը ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության և Իրանի՝ հակաարևմտյան ավանդական մոտեցումների ներքո:

Երկրորդ ենթագլուխում, որ վերնագրված է **«Փոխհարաբերություններում առկա խնդիրների լուծման երկկողմ և բազմակողմ ձևաչափերը, բանակցային գործընթացը 1991-1998թթ»,** վերլուծության է ենթարկվում թուրք-սիրիական հարաբերություններում առկա տարածքային փոխադարձ հավակնությունների խնդիրը՝ առավելապես կենտրոնանալով Ալեքսանդրետի սանջակի պատկանելության հետ կապված հարցի պատմական արմատների վերհանման, այդ տարածքի նկատմամբ հավակնություններ ունեցող կողմերի դիրքորոշումների ու քայլերի հստակեցման, Ազգերի լիգայի միջոցով խնդրի միջազգայնացման, 1937թ-ից Սանջակի կառավարման նպատակով Սահմանադրության ընդունման և այդ ժամանակահատվածում տեղ գտած ֆրանս-թուրքական բանակցությունների գործընթացի դիտարկման, սանջակում ներքաղաքական անկայունության և որպես այդ ամենի արդյունք՝ Սիրիայի կողմից Ալեքսանդրետի Սանջակը կորցնելու իրողությունների, Թուրքիայի նկատմամբ դրանով պայմանավորված քաղաքականության վրա:

Փոխհարաբերություններում առկա խնդիրների վերաբերյալ հաջորդ անդրադարձը վերաբերում է ջրային ռեսուրսների օգտագործման խնդրին: Ենթագլխում նշվում է, որ ինչպես թուրք-սիրիական փոխհարաբերություններում, այնպես էլ տարածաշրջանային մակարդակում ջրային հիմնահարցը պայմանավորված էր այդ երկրների (ինչպես նաև Իրաքի և Լիբանանի) կողմից իրենց տարածք մուտք գործող և այդ տարածքով հոսող ջրային ռեսուրսների անհատական և կոլեկտիվ օգտագործման շուրջ կողմերի տարակերպ մոտեցումներով, ինչպես նաև այդ հանգամանքը հարևան-մրցակից երկրների նկատմամբ որպես քաղաքական լծակ կիրառելու իրողություններով: Ենթագլխում երկկողմ հարաբերություններում վերոհիշյալ հիմնահարցը հետազոտվել է ինչպես երկու երկրներում առկա ջրային ռեսուրսների ծավալի ու օգտագործման, այնպես էլ

քաղաքական, իրավական և միջազգային-իրավական դիտանկյուններից:

Երկու երկրների միջև առկա խնդիրների թվում ենթագլխում հաջորդ անդրադարձը կատարվել է «քրդական» գործոնին, որը դիտարկվել է տարածաշրջանային մակարդակում նրա՝ աշխարհագրական ներկայացվածության, բնակության երկրներում քանակական տվյալների դիտարկման, այդ երկրների քաղաքական կյանքում ներգրավվածության տարբեր աստիճանների, տարածաշրջանի երկրների կողմից այդ գործոնը սեփական շահերի տեսանկյունից օգտագործելու իրողությունների ներքո: Հետազոտության մեջ որպես քրդական գործոն հիմնականում դիտարկվում է Քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) գործունեությունը երկկողմ փոխհարաբերությունների համատեքստում

Ատենախոսության երրորդ ենթագլուխն ունի **«Տարածաշրջանային երրորդ երկրների հետ հարաբերությունների անդրադարձը երկկողմ օրակարգին (Պաղեստին, Լիբանան, Իսրայել)»** վերնագիրը: Աշխատանքի այս մասում անդրադարձ է կատարվում երկու երկրների մոտեցումներին, որ վերաբերում են տարածաշրջանային հիմնահարցերի, երրորդ երկրների հետ հարաբերություններին: Ենթագլխի *առաջին* մասում ներկայացվում են Պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի բանակցային մի շարք դրվագներ, այդ գործընթացում ԱՄՆ-ի միջնորդական առաքելության դերն ու նշանակությունը, Սիրիայի շահերն ու որդեգրած քաղաքականությունը: Մյուս կողմից դիտարկվում և վերլուծվում են այդ գործընթացներում Թուրքիայի՝ 20-րդ դարի 90-ականներից ակտիվացած քաղաքական և տնտեսական շահերն ու որդեգրած մոտեցումները: Ենթագլխի *երկրորդ* մասում անդրադարձ է կատարվում Լիբանանում 1976-ից 1989-ը ձգված քաղաքացիական պատերազմի արդյունքում ձևավորված ներքաղաղաքական գործընթացներին՝ կենտրոնանալով դրանց մեջ սիրիական գործոնի՝ այդ թվում նաև ռազմական ներկայության ապահովման քաղաքական իրողություններին, մյուս կողմից թուրք-սիրիական հարաբերությունների ուսումնասիրության ներքո արձանագրվում է, որ Լիբանանի դերը Անկարայի համար պայմանավորված էր Սիրիայի գործոնով և հատկապես ՔԱԿ-ի մարտիկների՝ Բեքաայի հովտում հայտնվելու հանգամանքներով: Ենթագլխի *երրորդ* մասը նվիրված է Իսրայելի հետ երկու երկրների հարաբերություններին: Հետազոտության այս հատվածում քննվում է 1991-2002թթ. սիրիա-իսրայելական և թուրք-իսրայելական հարաբերությունները, որոնք ձևավորվեցին որակապես տարբեր հիմքերի

վրա. եթե սիրիա-իսրայելական փոխհարաբերություններն ածանցվում էին տարածքային, ջրային խնդիրների շուրջ ԱՄՆ-ի նախաձեռնած բանակցային օրակարգերից, ապա թուրք-իսրայելական հարաբերությունների հիմքն արդյունավետ համագործակցության ծավալումն էր ռազմատեխնիկական և տնտեսական ոլորտներում, փոխադարձ անվտանգության տարածաշրջանային մարտահրավերներին արդյունավետ ու համատեղ ջանքերով արձագանքելու առաջնահերթությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխն ունի «**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ (1998-2010թթ.)**» վերնագիրը: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում, որն ունի «**Ադանայի պայմանագիրը որպես փոխհարաբերությունների զարգացման շրջադարձային փուլ**» վերնագիրը, դիտարկվում և ներկայացվում են 20-րդ դարի 90-ականների վերջին թուրք-սիրիական փոխհարաբերություններում առկա նախապատերազմական լարվածության իրողությունները, որը մեծ դժվարությամբ հաղթահարվեց միջնորդ երկրների ջանքերի ու 1998թ. Ադանայի պայմանագրի կնքման արդյունքում: Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որ ունի **«Երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան Ադանայի պայմանագրից մինչև Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալը (1998-2002թթ.)»** վերնագիրը, դիտարկվում և կոնկրետ ցուցիչներով (հարաբերությունների լարման կոր և պաշտոնական փոխայցելությունների քանակ) վերլուծության է ենթարկվում Ադանայի պայմանագրի անդրադարձը երկու երկրների փոխհարաբերություններում գործակցային միտումների ի հայտ գալու ուղեգծի վրա: Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «**Մերձավորարևելյան տարածաշրջանային զարգացումներով պայմանավորված թուրք-սիրիական փոխհարաբերությունների որակական փոփոխությունը և զարգացումը մինչև Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի մակարդակ (2002-2010թթ.)**», ներկայացվում է Սիրիայի ու Թուրքիայի գործակցության նոր որակը՝ մասնավորապես Լիբանանի հետ Թուրքիայի հարաբերությունների խորացման, Սիրիայի ու Իսրայելի հարաբերությունների հարթեցման նախաձեռնության համատեքստում: Այս ամենը լիովին տեղավորվում էր Ռ.Թ.Էրդողանի կառավարության «ռազմավարական խորք» արտաքին քաղաքական

հայեցակարգի միջակայքում, և իր տրամաբանական արտացոլումը ունեցավ Սիրիայի հետ 2009թ. սեպտեմբերին կնքված Բարձրաստիճան ռազմավարական համագործակցության խորհուրդ ստեղծելու համաձայնագրում: Սակայն ռազմավարական այդ գործակցությանը բախտ չէր վիճակվելու իրաղություն դառնալ, քանզի նախ՝ 2001-ից տարածաշրջան ներմուծված «Մեծ Մերձավոր Արևելք» ամերիկյան ծրագիրը, ապա նաև 2011թ. «արաբական գարունը» պատճառ հանդիսացան, որ Թուրքիան վերադառնա տարածաշրջանային քաղաքականության իր նախկին մոդելներին, իսկ Սիրիան փորձի աշխարհաքաղաքական նոր պայմաններում ապահովել սեփական երկրի ամբողջականությունն ու ինքնիշխանությունը:

Եզրակացություն բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական դրույթները:

1. 1990-1991 թթ. իրաքյան ճգնաժամի հանգուցալուծման գործընթացն էական դերակատարում ունեցավ տարածաշրջանում ուժային վերափոխումների վրա: Միջազգային նոր իրավիճակում, Սիրիան, միանալով հակասադամյան կոալիցիային, փորձեց դուրս գալ քաղաքական մեկուսացումից և ինչ-որ առումով նոր նշաձող սահմանել ԱՄՆ-ի հետ հարաբերություններում՝ Արևմուտքի համար կարևորելով իր՝ որպես արաբական երկրի դերակատարումը ողջ տարածաշրջանում: Թուրքիան սառը պատերազմից հետո գործնականում կարողացավ ապահովել իր՝ որպես վստահելի գործընկերոջ դիրքերը կոալիցիոն ուժերի ու հատկապես ԱՄՆ-ի համար՝ դրանից քաղելով քաղաքական, ռազմական, իսկ հետագայում նաև տնտեսական օգուտներ: Հակաիրաքյան կոալիցիայում Սիրիան սկսեց համագործակցել իր ավանդական հակառակորդ Թուրքիայի հետ, սակայն թուրք-սիրական հարաբերություններում, չնայած միացյալ կոալիցիայում հանդես գալու իրողությանը և հակաիրաքյան մոտեցումներին, փոփոխություններ չգրանցվեցին կողմերի միջև պատմականորեն առկա խնդիրների (Ալեքսանդրետի սանջակի, ջրային ռեսուրսների և քրդական հարցի) լուծման հարցում:

2. Երկու պետությունների փոխհարաբերություններում առկա տարածքային՝ Ալեքսանդրետի սանջակի պատկանելիության հարցն այն եզակի հարցերից է, որ քննարկվել է այնպիսի միջազգային ատյաններում, ինչպես Ազգերի Լիգան, ՄԱԿ-ը, ԱԵԽ-ը: Ալեքսանդրետի սանջակի պատկանելիության հարցը Սիրիայի համար ունի ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքաղաքական օգտագործման կոնտեքստ և երկկողմ օրակարգում Ալեքսանդրետի

սանջակի հիմնահարցը բանակցային թեմա դարձավ 1998թ-ին, երբ երկու հարևանները հաղթահարեցին քրդական հիմնախնդրի հետ կապված մի շարք ճգնաժամեր և 1998թ. Թուրքիայի Ջեյհան քաղաքում (Ադանայի նահանգ) համաձայնագիր ստորագրեցին:

1. Թուրքիան ջրային հարցը ավանդաբար դարձրել էր իր քաղաքական գործիքարանի ճնշման կարևոր լծակներից մեկը՝ օգտվելով մերձավորարևելյան տարածաշրջանում ջրի ռազմավարական կարևոր ռեսուրս լինելու հանգամանքից և այն իրողությունից, որ ջրային պաշարներին տիրապետող երկրներն իրենց հարևանների նկատմամբ ձեռք են բերում ազդեցության հավելյալ լծակներ: Դամասկոսն իր հերթին փորձում էր ջրի հիմնախնդիրը միջազգայնացնել՝ առաջարկելով խնդիրը լուծել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, Միջազգային իրավական հանձնաժողովի և Արաբական պետությունների լիգայի միջոցով: Ակնհայտ է, որ Սիրիան ջրային խնդրում թույլ կողմն էր, ինչը լավ գիտակցում էր նաև Թուրքիան՝ ջրային լծակն արդյունավետ կիրառելով Սիրիայի հետ հարաբերություններում: Այս պայմաններում Սիրիան մի կողմից փորձում էր Իրաքի հետ միացյալ ճակատով հակակշռել Թուրքիային, մյուս կողմից ակտիվ աջակցություն էր ցուցաբերում թուրքական իշխանությունների դեմ հանդես եկող ահաբեկչական կազմակերպություններին: 1998-2010թթ ջրային հիմնահարցը դարձավ թուրք-սիրիական նոր օրակարգի մի մասը (որի շուրջ կողմերն առավել համաձայնողական մոտեցում որդեգրեցին Ադանայի պայմանագրի ստորագրումից հետո:)

2. 1990-ական թթ. քրդական հարցը շարունակում էր մնալ Թուրքիայի թիվ մեկ ներքաղաքական խնդիրը, որը միաժամանակ Անկարայի վրա արտաքին շարունակական ճնշումների ու ազդեցության պատճառ է: Սիրիայի համար այն նույնպես ոչ պակաս նշանակալի քաղաքական հետևանքներ ունի: Լինելով Իրաքի տարածքային ամբողջականության կողմնակից և քրդական պետության ստեղծման աներկբա հակառակորդ, Սիրիան ստիպված էր աջակցել այս ուղղությամբ թուրքական կողմից ձեռնարկվող քայլերին, սակայն 1990-ական թթ. քրդական հարցը Թուրքիայի դեմ օգտագործելը, PKK-ին ցուցադրվող աջակցությունն ու ճնշումը Թուրքիայի վրա այլ կենսական հարցերում, մասնավորապես Եփրատ գետի ջրերի բաշխման հարցում, 1998թ. երկկողմ խորը ճգնաժամի պատճառ հանդիսացան և Անկարայի ռազմատենչ քաղաքականության արդյունքում Սիրիան և Թուրքիան հայտնվեցին պատերազմի եզրին:

3. 1991-2002թթ. պաղեստինյան հիմնահարցը ինչպես Սիրիայի, այնպես էլ Թուրքիայի արտաքին քաղաքական օրակարգում կարևոր դեր ունեցավ: Սիրիայի պարագայում դա պայմանավորված էր տարածաշրջանում սեփական հեղինակության բարձրացման և մերձավորարևելյան ընթացիկ գործընթացներում ազդեցություն ձեռք բերելու ցանկությամբ. խոսքը հատկապես Իսրայելի ներքաղաքական ու արտաքին քաղաքական գործընթացների վրա ազդելու մասին էր: Անկարայի համար Պաղեստինի հարցը ծառայում էր որպես գործիք՝ արաբական աշխարհի գործերին ավելի ակտիվ մասնակցություն ունենալու, տարածաշրջանում ավելի մեծ հեղինակություն ձեռք բերելու և Իսրայելի հետ գործակցության խորացման համար:

4. Սիրիա-Լիբանան հարաբերություններն ավանդաբար ավելի սերտ են եղել, քան Թուրքիա-Լիբանան հարաբերությունները: 1991-2002թթ. էլ այս առումով շոշափելի փոփոխություն չարձանագրվեց. Լիբանանում Սիրիայի ազդեցության պահպանումը պայմանավորված էր ինչպես պատմական գործոններով, այնպես էլ Սիրիայի՝ տարածաշրջանում ազդեցության լծակների տիրապետելու և մերձավորարևելյան գործընթացներում կարևոր դերակատար մնալու հավակնություններով: Իսկ Թուրքիայի շահերը լիբանանյան հարթակում ածանցվում էին հենց սիրիա-լիբանանյան համագործակցությունից, քանի որ Սիրիան նաև Լիբանանի միջոցով էր իրականացնում հակաթուրքական իր քաղաքականությունը, այդ թվում՝ ներգրավելով էթնիկ խմբավորումների:

5. Իսրայելի գործոնը նույնպես 1991-2002թթ. թե՛ Թուրքիայի, թե՛ Սիրիայի համար առանցքային եղավ տարածաշրջանային քաղաքականության ուղեգծում: Եթե 1990-ականների առաջին կեսին Թուրքիան անհանգստացած էր սիրիա-իսրայելական հարաբերությունների ջերմացմամբ, ինչը կարող էր բացասական ազդեցություն ունենալ տարածաշրջանում և առհասարակ արաբական աշխարհում Թուրքիայի դիրքավորման համար, ապա Սիրիան էլ 90-ականների երկրորդ կեսից անհանգստացած էր թուրք-իսրայելական հարաբերությունների, մասնավորապես՝ դրա ռազմական հարթության խորացմամբ, որը դիտարկվում էր որպես իրական սպառնալիք տարածաշրջանում սեփական շահերի ու մինչև իսկ իր տարածքային ամբողջականության համար:

6. Կողմերի քաղաքական ողջամտության և փոխըմբռնման հասնելու շնորհիվ 1998թ. հոկտեմբերին ստորագրվեց Ադանայի պայմանագիրը, որը երկու պետությունների միջև առկա խնդիրների լուծումները տեղափոխեց բանակցային դաշտ՝ դրանով երեկվա

հակառակորդների շփումը դարձնելով կառուցողական ինչպես երկկողմ, այնպես էլ տարածաշրջանային հարթակներում: Այդ համատեքստում Արդարություն և զարգացում կուսակցության կողմից հատուկ կարևորվեց հարաբերությունները իսլամական աշխարհի հետ՝ որպես կարևոր օղակ Արևմուտքի և Արևելքի միջև: Անկարայի կարծիքով, դա հնարավորություն կտար Թուրքիային միջնորդի դեր կատարել ինչպես Մերձավոր Արևելյան տարածաշրջանում, այնպես էլ տարածաշրջանի պետությունների և Արևմուտքի՝ հակասություններով լի հարաբերություններում:

7. Ի տարբերություն 1990-ական թթ. 2002-2010թթ. Թուրքիա-Սիրիա հարաբերություններն ավելի կենտրոնացված էին տարածաշրջանային զարգացումների և տարածաշրջանային համագործակցության վրա: Երկկողմ խնդիրների զգալի մասը իրենց լուծումն էր ստացել և երկու պետությունների փոխհարաբերությունների օրակարգում դրանք համեմատաբար ավելի երկրորդական պլանում էին, քան նախորդ ժամանակահատվածում:

8. 2002թ. ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո թուրք-սիրիական հարաբերությունների սրընթաց կարգավորման կարևոր փաստարկներից մեկը հանդիսանում է այն, որ տասնամյակներ երկկողմ օրակարգում լարվածության աղբյուր հանդիսացող ահաբեկչության և ահաբեկչական կազմակերպությունների խնդրում երկու պետությունները անցան համագործակցության և նույնիսկ համատեղ պայքարի: Դրա արտահայտությունը հանդիսացան 2009թ. դեկտեմբերի 23-ին երկու պետությունների ՆԳՆ-ի միջև կնքված «Անվտանգության և համագործակցության համաձայնագիրը» և 2010թ. դեկտեմբերի 21-ին Թուրքիայի և Սիրիայի կառավարությունների միջև ստորագրված «Ահաբեկչության և ահաբեկչական կազմակերպությունների դեմ պայքարում փոխհամագործակցության» համաձայնագրերը: ՈՒշագրավ է, որ երկու փաստաթղթերն էլ հիմնվում են Ադանայի պայմանագրի վրա և ստորագրվել են այդ պայմանագրի համագործակցության ոլորտները ընդլայնելու և համագործակցությունը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

9. «Արաբական գարունի» իրադարձություններից հետո կարելի է փաստել, որ տասնամյակներ տևած հակադրությունը գործնականում մինչ օրս շարունակվում է, իսկ խնդիրների հիմնական մասն այդպես էլ հնարավոր չեղավ կարգավորել: Գործընթացները փաստեցին, որ 21-րդ դարասկզբին ձևավորված իրավիճակում որոշակի դրական փոփոխությունները և կողմերի միջև համագործակցության միտումները միայն ժամանակավոր բնույթ էին կրելու, քանզի

թելադրված էին կողմերի (հատկապես Թուրքիայի) այսրոպեական շահերը սպասարկելու ցանկությամբ, ինչպես նաև մերձավորարևելյան քաղաքական կոնյուկտուրայով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ա. Ջուլֆալակյան, Ալեքսանդրետի սանջակի հիմնախնդիրը որպես թուրք-սիրիական հարաբերությունների վրա ազդող պատմական գործոն, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան 2015, էջ 188-202:
2. Ա. Ջուլֆալակյան, Պաղեստինի հիմնահարցը և թուրք-սիրիական հարաբերությունները 20-րդ դարի 90-ականներին, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան 2016, էջ 183-192:
3. Ա. Ջուլֆալակյան, Իսրայելական գործոնը Թուրքիայի և Սիրիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, «Ժամանակակից Եվրասիա», Արաբական աշխարհ. Գաղափարական ու քաղաքական նոր միտումներ, հատոր 4(2), Երևան 2015, էջ 87-105:
4. Ա. Ջուլֆալակյան, Ջրային հիմնահարցը թուրք-սիրիական հարաբերություններում 20-րդ դարի 90-ականներին, «Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան 2017, էջ 316-322:
5. Ա. Ջուլֆալակյան, Ադանայի պայմանագիրը և թուրք-սիրիական հարաբերությունները մինչև 2002թ., Արաբագիտական ուսումնասիրություններ, հ. 9, Երևան 2017, էջ 147-169:
6. Ա. Ջուլֆալակյան, 1990-91թթ. Իրաքյան ճգնաժամի անդրադարձը տարածաշրջանային գործընթացների վրա. Սիրիական (արաբական) դիտանկյուն, Արևելագիտության հարցեր, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան 2017, էջ 66-90:

ДЖУЛФАЛАКЯН АРСЕН ЛЕВОНОВИЧ
ВЗАИМООТНОШЕНИЯ ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКИ И СИРИЙСКОЙ АРАБСКОЙ РЕСПУБЛИКИ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНЫХ ПРОБЛЕМ (1991-2010гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история, международные отношения». Защита состоится 22 ноября, 2019 г., в 12:00, на заседании специализированного совета 006 "Всемирная история", действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации обусловлена исключительной значимостью турецко-сирийских взаимоотношений в ближневосточном регионе, считающемся традиционно сложным и проблематичным. В этих отношениях период с 1991 по 2010 гг. считается периодом коренных изменений, на изучение которого и направлена данная работа. Актуальность темы диссертации обусловлена и тем обстоятельством, что отношения двух соседствующих государств, включающих исторические, территориальные, энергетические и многие иные элементы, десятилетиями находились в фокусе политических процессов Ближнего Востока, влияя на течение и сущность не только регионального, но и в некоторых случаях международного развития. Важность выбранной темы исследования заключается и в том, что как Турция, так и Сирия имели и продолжают иметь качественно разную, но ощутимую роль в исторической судьбе армянского народа. Поэтому для комплексного понимания взаимоотношений двух государств в настоящем, в том числе проблем политического и военного характера, во многом необходимо иметь представление об исторических основах, обуславливающих данные взаимоотношения.

Цель темы диссертации заключается в исследовании одного из важнейших этапов турецко-сирийских взаимоотношений и выявлении динамической связи их развития с региональными процессами.

Основной научной новизной диссертации является комплексное изучение сирийско-турецких взаимоотношений 1991-2010 гг., обусловленных изменениями, произошедшими в результате

регионального развития двусторонних отношений, а также влиянием данных отношений на развитие региональных процессов.

Диссертация состоит из введения, двух глав (каждая из которых включает соответствующие параграфы), заключения, списка использованной литературы и примечания. В **введении** представлены актуальность выбранной темы, задачи и цели исследования, научная новизна, временные рамки исследования, теоретико-методологическая база, практическая значимость исследования, а также обзор литературы относящейся к задаче исследования.

Первая глава диссертации - "Взаимоотношения Турецкой Республики и Сирийской Арабской Республики в период переоценки и пересмотра внешнеполитической стратегии двух стран (1991-1998гг.)", глава состоит из трех параграфов. Первый параграф - "Развал двухполярного мира и воздействие иракского кризиса 1990-91 гг. на региональные процессы: сирийская (арабская) и турецкая точка зрения" представляет военно-политические и политико-исторические основы выявления истоков иракского кризиса 1990-91 гг., а также подходы Турции и Сирии к данному кризису.Второй параграф - "Двусторонние и многосторонние форматы решения проблем во взаимоотношениях, переговорный процесс в 1991-1998гг." направлен на изучение проблем, взаимных территориальных претензий в турецко-сирийских взаимоотношениях с основным акцентом на изучение исторических и политико-правовых фактов принадлежности санджакства Александретты. Параграф также посвящен проблеме использования водных ресурсов в повестке турецко-сирийских взаимоотношений и изучению влияния «курдского» фактора в двусторонних отношениях, оценке значимости и роли данного фактора в региональных процессах, а также анализу деятельности "Рабочей партии Курдистана".

Третий параграф - "Влияние отношений с третьими региональными странами на двустороннюю повестку (Палестина, Ливан, Израиль)" посвящен вопросам Ливана и Палестины в контексте турецко-сирийских взаимоотношений в 90-ых годах, а также различным аспектам взаимоотношений двух государств с Израилем.

Вторая глава диссертации - "Период формирования новых механизмов активного развития взаимоотношений и сотрудничества Турецкой Республики и Сирийской Арабской Республикой (1998-2010гг.)" состоит из трех параграфов. Первый параграф - "Договор Аданы как краеугольный этап развития взаимоотношений" посвящен

предвоенному напряжению в турецко-сирийских взаимоотношениях в 90-е годы XX века, преодоленному с большой трудностью благодаря усилиям стран-посредников и в результате подписания в 1998 году договора Аданы, а также формированию атмосферы сотрудничества между Турцией и Сирией в новых условиях. Второй параграф - "Динамика развития двусторонних отношений в период с подписания договора Аданы до пришествия к власти партии Справедливости и развития (1998-2002гг.)" посвящен экономическому росту и активизации официальных отношений по разрешению существующих проблем в отношениях двух стран. Третий параграф - " Качественное изменение и развитие турецко-сирийских отношений до уровня Совета стратегического сотрудничества высокого уровня обусловленное Ближневосточными региональными процессами (2002-2010гг.) " посвящен проблематике качественно новых отношений Турции и Сирии в контексте Ливанского кризиса, американских проектов "Большого Ближнего Востока" и "Арабской весны".

В **заключении** представлены основные результаты исследования.

ARSEN L. JULFALAKYAN

THE RELATIONSHIP OF THE REPUBLIC OF TURKEY AND SYRIAN ARAB REPUBLIC IN THE CONTEXT OF REGIONAL PROBLEMS (1991-2010)

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02 The defense of the dissertation will take place on 22 November 2019, at 12:00, at the meeting of the Specialized council 006 "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: M. Baghramyan Avenue 24/4, Yerevan 0019

SUMMARY

The relevance of the topic for this thesis is determined by the crucial role of the Turkish-Syrian relations against the background of the Middle East, which is traditionally considered to be complicated and problematic. The focus of the research is the period between 1991-2010 of these relations considered to be a time of radical changes. The importance of the topic of the thesis is also connected with the fact that the relations between the two neighboring countries, including historical, territorial, energy and series of other components, had been in the focus of the

Middle Eastern political processes for decades, impacting the course and content of both the regional and, in some cases, also the international developments. Additionally, the relevance of the dissertation is that both Turkey and Syria have had a significant, although different role in the destiny of the Armenian people and they still do. Therefore, in order to have a complete understanding of the relationship of the two states nowadays, including their political and military issues, it is important to be well aware of the historical roots of their relations. The aim of the thesis is to explore one of the key stages of the Turkish-Syrian relations and reveal the dynamics of their development with regional processes.The main scientific novelty of the thesis is that the survey is a complex study of Syrian-Turkish relations from the period of 1991-2010, determined by the changes that had occurred as a result of the regional developments of bilateral relations, as well as by the impact of these relations on regional developments.

The thesis consists of the introduction, two chapters (each has sub-chapters), the conclusion, list of references and an appendix.

The **introduction** includes the relevance, the goals and purposes of the research, scientific novelty, timeframe of the research, the theoretical-methodological basis, practical significance, and the review of the bibliography regarding the research objectives.

The first chapter is entitled **"The Relationship of the Republic of Turkey and the Syrian Arab Republic in the Period of the Transformation of the Foreign Policy Strategies of the Two Countries"** and consists of **three sub-chapters**. The first sub-chapter, titled **"The Collapse of the Bilateral World order and Impact of the Gulf Crisis on Regional Processes: The Syrian (Arab) and Turkish Prism"** represents the military-political, political-historical foundations for revealing the origins of the 1990-1991 Iraqi crisis, and the Turkish and Syrian approach towards it. The second sub-chapter, titled **"The Bilateral and Multilateral Formats of Resolving the Problems between Two Countries, 1991-1998 Negotiation Process"** consists of the study of problems and mutual territorial claims in Turkish-Syrian relations with the main focus on studying the historical, political and legal facts of the belonging of the Alexandretta's Sanctuary. The section is also dedicated to the problem of using the water resources in the agenda of the Turkish-Syrian relations and studying the impact of the Kurdish factor on bilateral relations, assessing the significance and role of this factor in regional processes, and analyzing the activity of the Kurdistan Workers' Party

(PKK). The third sub-chapter, titled **"The Impact of the Relations with Third Countries of the Region on the Bilateral Agenda (Palestine, Lebanon, Israel)"** is dedicated to the issues of Lebanon and Palestine in the context of the Turkish-Syrian relations in the 1990s, as well as different aspects of relations between the two states with Israel.

The second chapter of the thesis entitled **"The Relationship of the Republic of Turkey and Syrian Arab Republic in the Period of the Active Development and New Mechanisms of Cooperation (1998-2010)."** It consists of **three sub-chapters**.The title of the first sub-chapter is **"The Adana Treaty as a Cornerstone in the Development of Relations"** addresses the pre-war tensions in the 1990s of the 20th century, overcome with big difficulties due to the efforts of the mediating states and as a result of signing the Adana Treaty in 1998, as well as shaping a climate of cooperation between Turkey and Syria in the new realities. The second sub-chapter of the second chapter is entitled **"The Dynamics of the Development of Bilateral Relations in the Period Between the Signature of the Adana Treaty and Coming to Power of the Justice and Development Party (1998-2002)"** deals with the economic growth and activation of official relations aimed at regulating the existing problems in the bilateral relations of the countries. The third sub-chapter in the second chapter titled **"The Qualitative Change and Development of the Turkish-Syrian Relations Linked to Regional Processes to the High Level of the Council for Strategic Cooperation (2002-2010)"** addresses the agenda of qualitatively new relations between Turkey and Syria in the context of the Lebanese crisis and the Greater Middle East and Arab Spring US projects.

The **conclusion** sums up the main outcomes of the research.